ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԸ (1900—1914 ԹԹ.)

Ա. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արևմտահայերի քաղաքական և տնտեսական զարգացումը, նրանց ազգային և սոցիալական պահանջների բավարարմանն ուղղված խնդիրների լուծումը 1900—1914 թթ., անկախ նրանց կամքից, նշանակալից չափով կապված են եղել գերմանա-թուրքական հարաբերությունների հետ։ Իր տնտեսական և ռազմաքաղաքական ծրագրումները Մերձավոր արևելքում իրականացնելիս Գերմանիան Թուրքիային դիտում էր որպես բոլոր առումներով շատ կարևոր հենակետ։ Միաժամանակ, Թուրքիայում վարած իր քաղաքականության մեջ Գերմանիան ուշադրության կենտրոնում էր պահում Արևմտահայաստանը, որը ըստ գերմանացի ճանաչված քաղաքագետ Պաուլ Ռոհրբախի՝ ներկայացնում էր համաշխարհային ուղիները տանող մի անառիկ ամրոց։ «Կարելի է գրեթե առանց չափազանցության հավաստել,—պնդում էր Պ. Ռոհրբախը,—որ ժամանակակից Թուրքիայի համար նույնիսկ նեղուցներին տիրելն այնքան ուշադրություն չպիտի գրավի, որքան Հայաստանին՝ նրա վերջին և հաստատուն գոյության այդ հենարանին տիրելը»[1]։ Պ. Ռոհրբախի կարծիքով, Հայաստանին տիրողը անմիջականորեն իշխում էր ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասի, այնպես էլ Միջագետքի վրա[2]։

Երկու կողմերի՝ Գերմանիայի և Թուրքիայի, շահախնդրությունները փոխադարձ էին։ Սուլթան Աբդուլ Համիդի և նրան փոխարինած երիտթուրքերի կառավարման շրջանում Գերմանիային վերագրվում էր արևմտյան տերությունների և հատկապես Ռուսաստանի հավակնություններից Թուրքիային պաշտպանողի դեր։ Եվ XIX դարի վերջերից, մանավանդ XX դարի առաջին երկու տասնամյակներում, ընդհուպ մինչև 1918 թվականի վերջը, կայսերական Գերմանիան լիակատար չափով դրսևորեց թուրքական բռնապետության պաշտպանողի իր դերը։ Գերմանական կառավարող շրջանները ղեկավարվում էին Պ. Ռոհրբախի այն խորհրդով, որ միայն քաղաքական և ռազմական տեսակետից ուժեղ Թուրքիան է ի վիճակի Գերմանիային հնարավորություն տալու, որպեսզի Եփրատի և Տիգրիսի միջև ընկած երկրի լայն հեռանկարները օգտագործվեն «Գերմանիայի ազգային հարստության մեծացման և տնտեսական հաշվեկշռի բարելավման համար»[3]։ Գերմանիան անում էր ամեն ինչ, որպեսզի, իր մյուս քաղաքագետ Էռնեստ Եկի արտահայտությամբ, մոտեցնի այն պահը, երբ կկարողանա շարժման մեջ դնել իսլամական հզորության թուրքական լծակները և միայն որով «այն ժամանակ գերմանական պատերազմը կդառնա համաշխարհային»[4]։

1915—1918 թվականներին Թուրքիայում գերմանական գեներալ Ֆոն Սանդերսի մոտ որպես թարգմանիչ և համհարզ ծառայած, հետագայում համաեվրոպական մասշտաբի պացիֆիստական գործիչ, գերմանա-թուրքական դաշինքի ներքին խնդիրներին լավատեղյակ Հայնրիխ Ֆիրբյուխերի[5]

---

1 С. М. Акопян. Западная Армения в планах империалистических держав. Е., 1967. с. 39.

2 *Տե՛ս* П. Рорбах. Война и германская политика. Петроград. 1915. с. 62.

3 Rohrbach P. Die Bagdadbahn. Berlin. 1902. S. 29.

4 Генрих Фирбюхер. Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Ответственный редактор и автор предисловия и введения Вардгес Мнкаеляп. Е., 1991. с. 23.

վկայությամբ, թուրքական բանակը գերմանացի սպաներով շարունակ ավելացվող համալրմանը զուգընթաց, Գերմանիան առաջ էր տանում Բաղդադի երկաթուղու կառուցումը, աշխուժորեն գործում էին Կրուպն ու Գերմանական բանկը (Դոյչե բանկ)։ Հ. Ֆիրբյուխերի պատկերավոր բնորոշմամբ, համաշխարհային քաղաքականության շախմատային պարտիայում Թուրքիան գերմանական կառավարության, արդյունաբերական մագնատների և քաղաքական գործիչների համար կարևոր դեմք էր, և նրանք այնքան էլ չէին ցանկանում բացել իրենց խաղաթղթերը[6]։ Դեմոկրատ Նաումանը, Ռոհրբախը և Եկը, օրինակ, Գերմանիայում թխեցին կեղծ կարծիք թուրքական հիմնահարցի վերաբերյալ, որն իր վտանգավորությամբ նույնանում էր պանգերմանական դեմոկրատների հետ[7]։ 1916—1919 թվականներին պանգերմանականների արտահայտած «մեղայականները»[8] չէին կարող արդարացնել նրանց թուրքամոլ և ըստ էության հակահայկական դիրքորոշումները 1900—1913 թթ.։

Գերմանիայի կողմից Թուրքիա կատարվող բազմակողմ ներթափանցումը կապված էր XIX դարի վերջին—XX դարի սկզբներին երկրում ընթացող արդյունաբերական արագ զարգացման հետ, երբ Գերմանիան Եվրոպայում այդ ասպարեզում դուրս էր եկել առաջին տեղը ձգտում էր հասնել աշխարհի վերաբաժանմանը և իր կապիտալի ներդրման համար նոր շուկաներ ստանալուն[9]։

Գերմանական կառավարող շրջանների, կապիտալիստների և բանկիրների առաջին հայացքը ուղղվել էր դեպի Թուրքիա, և վերջինիս ֆինանսատնտեսական կարևոր ճյուղերը դնելով կենտրոնանում էին գերմանացիների ձեռքում։ XX դարի սկզբներից ևեթ տարեցտարի Թուրքիայում ընդլայնվում էին գերմանական կոնցեսիաները, Թուրքական բանակում հրամանատարական գլխավոր պաշտոնները անցնում էին գերմանացի զինվորականներին[10]։

Քրիստոնյա Գերմանիայի կայսրն ու կառավարությունը արդարացրին 1894—1896 թվականների հայկական ջարդերը, որոնք կազմակերպված էին սուլթան Աբդուլ Համիդի կողմից։ Այս առթիվ սուլթանին հղած իր նամակում կայսր Վիլհելմ 2-րդը նրան խորհուրդ էր տալիս առանց տատանվելու «իր հպատակներին ցույց տալ, որ ինքն Աստծո կամոք նշանակված միապետ է, և իր կամքը նրանց բոլորի համար Աստծո կամքն է»[11]։ Իսկ գերմանական կանցլերի թրքասիրությունը այն աստիճանի հասավ, որ նա հայկական ջարդերի մեջ մեղադրեց ոչ թե թուրքական կառավարությանը «այլ հայկական հեղափոխական—անարխիստական կոմիտեներին»[12]։

XX դարի սկզբից ևեթ Անգլիան ու Ֆրանսիան Թուրքիայում Գերմանիային աստիճանաբար զիջում են իրենց տնտեսական դիրքերը։ Դրան նպաստում էր Աբդուլ Համիդի ծայր աստիճան գերմանասեր քաղաքականությունը։ Նրա օրով գերմանական ընկերությանը տրվեց Բաղդադի երկաթուղու կառուցման առանձնաշնորհումը, իսկ գերմանական գաղթաբնակները հեղեղեցին Անատոլիան։ Ա. Մանդելշտամի բնորոշմամբ՝ եթե սուլթանը «բաց արավ գերմանացիների առաջ տաճկական տան արտաքին դարպասները», ապա «երիտասարդ թուրքերը բաց արին երկրորդը—ներքինը»[13]։

---

5 Տե՛ս նույն տեղում, էջ 5—11։

6 Տե՛ս նույն տեղում։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 20։

8 Տե՛ս Հայաստանը ըստ Ռոհրբախի 1919-ի տեսության, Կ. Պոլիս, 1919, էջ 3։

9 Տե՛ս Ջ. Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965, էջ 90։

10 Տե՛ս С. М. Акопян, նշվ. տպագ., էջ 36։

11 В. А. Амфитеатров. Армянский вопрос, СПб, 1906, с. 4.

12 А. С. Ерусалимский, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М., 1951, с. 198.

13 Ա. Ն. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պետությունը. պատմա—քաղաքական ակնարկ, թարգմանությամբ և առաջաբանով Վ. Նավասարդյանի, ս. Էջմիածին, 1919, էջ 6։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիա կատարած ապրանքների ներմուծմամբ Գերմանիան արդեն առաջ էր անցել Ռուսաստանից, Ֆրանսիայից և Իտալիայից, զիջելով միայն Անգլիային[14]։ 1913 թվականին Թուրքիա էր արտահանվել 74 միլիոն մարկի գերմանական ապրանք՝ հիմնականում գյուղատնտեսական մեքանաներ, էլեկտրատեխնիկական և քիմիական առարկաներ[15]։

Գերմանիայի կողմից տնտեսական (բնականաբար, նաև քաղաքական) առումով Թուրքիա ներթափանցելու գործում առաջնային դեր խաղաց Բաղդադի երկաթուղու կառուցման և շահագործման մենաշնորհը ստանալը։ Դեռ 1888 թվականին «Դոյչե բանկը» հասավ այն բանին, որ թուրքական կառավարության հետ պայմանագիր կնքեց Թուրքիայում երկաթուղու շինարարության մասին[16], որը Բոսֆորից պիտի հասներ մինչև Պարսից ծոց։ «Գերմանական բանկը» և շահագրգիռ մյուս կազմակերպությունները երկաթուղու կառուցման հարցում արժանացան սուլթան Աբդուլ Համիդի լիկատար աջակցությանն ու հովանավորությունը[17]։ Գերմանական կառավարությունը երկաթուղու կառուցումը համարում էր Թուրքիայի «խաղաղ» նվաճման կարևոր միջոց։ «Առաջավոր Ասիայի խաղաղ նվաճման փորձեր երկաթուղային գծի անցկացման միջոցով անում էին նաև Ֆրանսիան ու Անգլիան,—գրում է Պ. Մասլովը,—բայց գերմանացիներին ուղեկցեց ամենամեծ հաջողությունը Թուրքիային իրեն տնտեսապես ենթարկելու խնդրում»[18]։ Թուրքիայում երկաթուղու անցկացումը քաղաքական հարցի բնույթ ստացավ։ Դա նշում է նաև հարցի հանգամանալից հետազոտող Հերման Շմիդտը, որը 1914 թ. գրել է. «Երկաթուղու հարցը էլ ոչ մի երկրում չի ընդունել այնքան մեծ չափերի հասնող քաղաքական խնդրի բնույթ, որքան Թուրքիայում»[19]։

Բաղդադի երկաթուղու կոնցեսիան Գերմանային տրվեց 1899 թվականին։ «Դոյչե բանկի» ֆինանսական խմբակցությունը այդ երկաթուղու կառուցումը սկսում է 1903 թ., նախատեսված ունենալով Իզմիդ—Էսկիշեհիր—Անգորա, Էսկիշեհիր—Կոնիա—Բուլգուրլու, Բուլգուրլու—Էլհելիֆ և վերջապես Էլհելիֆ—Բաղդադ (1911 թ.) հատվածները[20]։ Բաղդադի երկաթուղու հանգրվանների նախնական և վերջնական վարիանտները ունեին հետևյալ պատկերը։ Նախնական տարբերակով, սկսվելով Կոստանդնուպոլսից, երկաթուղին Անկարա—Սվաս, Էրտում, Վան—Մոսուլ հատվածներով հասնելու էր Բաղդադ[21]։ Ռուսաստանը չէր կարող հանդուրժել իր դեմ ուղղված այդ պլանի իրականացումը։ Նա Թուրքիայի հետ ուներ պայմանագիր, ըստ որի, վերջինս առանց Ռուսաստանի համաձայնության չէր կարող որևէ երկրի թույլ տալ Արևելյան Անատոլիայի (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի) տարածքում

---

14 Տե՛ս А. Зурабов, Германский милитаризм в Турции (Летопись, 1917, № 5—6, с. 286).

15 Տե՛ս K. H. Müller, Die wirtschaftliche Bedeutung der Bagdadbahn, Hamburg, 1927, S. 161—162.

16 Տե՛ս Ст. Степанян, Армения в политике империалистической Германии (конец XIX—начало XX в.), Е., 1975, с. 14.

17 Նույն տեղում։ Տե՛ս նաև Die große Politik der Europäischen Kabinette 1871—1914. Sammlung der diplomatischen Akten des Auswärtigen Amts, Berlin, 1922—1927, 6 Band, S. 303.

18 Петр Маслов, Экономические причины мировой войны, М., 1915, с. 55.

19 Das Eisenbahnsystem der asiatischen Türkei, von der Hermann Schmidt, Berlin, 1914, S. 1.

20 Բ. Իշխանյան, Գերմանիայի և Թուրքիայի տնտեսական—քաղաքական փոխհարաբերությունները (քննական տեսություն), Թիֆլիս, 1915, էջ 13։

21 Ա. Ն. Մնացականյան, Գերմանա—թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում, Ե., 1948, էջ 34։

երկաթուղի կառուցել։ Ռուսաստանը խափանեց երկաթուղու առաջին նախագծի իրականացումը[22]։

Նոր նախագծով երկաթուղին, Սվասից թեքվելով դեպի հարավ, Խարբերդի և Մոսուլի վրայով պիտի մտներ Բաղդագ, ունենալով օժանդակ գծեր Սվասից դեպի Էրզրում և Բիթլիս[23]։ Այս երկրորդ ծրագիրն էլ գլուխ չեկավ, հավանաբար, այս անգամ էլ հանդիպելով Ռուսաստանի դիմադրությանը։ Եվ նկատելի չափով շեղվելով արևմտահայկական շրջանների միջով երկաթգիծ անցկացնելու իր ծրագրից, Գերմանիան ստացավ Թուրքիայի համաձայնությունը՝ երկաթուղին կառուցել Սվաս—Խարբերդ—Դիարբեքիր կետերով և դուրս գալ Բաղդագ[24]։ Բայց ի վերջո երկաթուղին անցավ Կոստանդնուպոլիս—Կոնիա—Ադանա—Հալեպ (նրա հյուսիսային կողմով)—Բաղդագ ուղղությամբ, այսինքն՝ ընկավ Արևմտյան Հայաստանից հարավ։ Բայց գերմանացիները, այնուամենայնիվ, ավելի ուշ թույլտվություն ստացան Բաղդադի երկաթուղու վրա կառուցելու Դարբերքիր—Մուշ գծերը, այսինքն՝ մուտք գործել նաև Արևմտյան Հայաստան։ «Գերմանական բանկը» այդ գիծը կառուցելու էր մինչև Դիարբեքիր[25]։ 1913 թ. թուրքական կառավարության համաձայնությամբ Գերմանական ֆինանսական խմբակցությանը թույլատրվում է կառուցել Բուլգուրլու—Սվաս և Դիարբեքիր—Արգանա երկաթգծերը[26]։

Երկաթուղու կառուցումը Գերմանիային տալով կոնցեսիայով, թուրքական կառավարությունը բացի տնտեսական շահերից, ձգտում էր ամրապնդել պաշտպանական իր հնարավորությունները ընդդեմ Կովկասից սպառնացող ռուսական վտանգի։ Իսկ գերմանացիները շահագրգռված էին, որպեսզի երկաթուղին անցներ Արևմտյան Հայաստանի բարեբեր շրջաններով, որտեղ նրանք ձեռք կբերեին ընդունակ և աշխատասեր հայ բնակչությանը և նրա վրա ազդելու հնարավորություն։

Ստ. Ստեփանյանը Ս. Հակոբյանը, Ջ. Կիրակոսյանը, Ե. Ղ. Սարգսյանը և օտար ու հայազգի այլ հեղինակներ այս կամ այն չափով անդրադարձել են Բաղդադի երկաթուղուն, ուշադրություն դարձնելով նաև հարցի քաղաքական կողմին։ Վերևում արդեն նշվեց գերմանացի ուսումնասիրող Հերման Շմիդտի կարծիքը այդ մասին։ Ստ. Ստեփանյանը առանձնացնում է Բաղդադի երկաթուղու նշանակությունը Ռուսաստանի հարավային սահմանների մոտ Գերմանիայի համար ռազմական հենարանի ստեղծման գործում, հատկապես դրանով էլ բացատրում գերմանական կառավարական շրջանների շահագրգռվածությունը այն բանում, որպեսզի երկաթուղին անցնի Արևմտյան Հայաստանի, այսինքն՝ Ռուսաստանին մերձակա տարածքով[27]։ Բ. Իշխանյանի կարծիքով, Գերմանիայի համար անհրաժեշտ էր Թուրքիայում իրականացնել մի այնպիսի ձեռնարկում, որը տնտեսական լավ հեռանկարի հետ միասին հետագայում ծառայեր որպես իր քաղաքական ծրագրի իրագործման հզոր նեցուկ[28]։

Գերմանիան, որն ավելի ուշ հանդես եկավ մերձավորարևելյան քաղաքականության մեջ, ձգտում էր «խաղաղ» նվաճման միջոցով Թուրքիան աստիճանաբար դարձնել իր գաղութը։ Բաղդադի երկաթուղին, որն անցնելու էր Անատոլիայի և Միջագետքի միջով, պետք է ծառայեր նշված նպատակի իրականացմանը։ Նրա միջոցով Գերմանիան մտնում էր այն շրջանները, ուր Անգլիան իրացնում էր իր ապրանքները և միաժամանակ դուրս էր տանում իր

22 Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 26։

23 H. Gothe. Die Bagdadbahn und das schwedischen Bauerelemente in Transkaukaslen und Palestin. Gedanken zur Kolonisation Mesophotamiens, München. 1902. S. 10.

24 Տե՛ս Die groβe Politik, Bd. 38. S. 118.

25 Նույն տեղում։

26 Раздел азиатской Турции по секретным документам бывшего МИД. М., 1924. с. 51.

27 Ст. Степанян, նշվ. աշխ., էջ 15։

28 Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 20։

արդյունաբերությանը անհրաժեշտ հումք։ Գերմանիայի ներթափանցումը Օսմանյան կայսրության տարածքներ սրում էր նրա հարաբերությունները Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ[29]։

Այսպիսով, Բաղդադի երկաթուղին կայսերական Գերմանիայի համար ուներ կարևոր նշանակություն հիմնականում հետևյալ առումներով։

1. Թուրքիա և առհասարակ Մերձավոր արևելք՝ տնտեսական ներթափանցման համար։

2. Թուրքիան աստիճանաբար իրենից կախյալ կիսագաղութի վերածման համար։

3. Ռազմական ամուր հենարանի ստեղծման համար՝ վերահաս պատերազմում Ռուսաստանի և նրա դաշնակիցների դեմ մարտական հաջող գործողությունների ծավալման նպատակով։

Մերձավոր և Միջին արևելքում իր քաղաքական և տնտեսական պլանների իրականացումը Գերմանիան հնարավոր էր համարում միայն Թուրքիայի վրա իր հսկողության սահմանման դեպքում։ Գերմանիայի «բաղդադյան ստրատեգիան» պետք է ծառայեր այդ նպատակին։ Ըստ Ջ. Կիրակոսյանի, այդ ստրատեգիայի գլխավոր նպատակը համարվում է Օսմանյան կայսրության վերածումը «գերմանական Հնդկաստանի», «գերմանական մոնապոլիսաների մի հսկայական գաղութային տիրապետության Մերձավոր Արևելում»[30]։

Գերմանիայի էքսպանսիան Թուրքիայի տնտեսական և ռազմաքաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտները տեղի էր ունենում սկզբում Աբդուլ Համիդի, ապա, գուցեև ավելի ուժեղ չափի, երիտթուրքերի օգնությամբ, որոնք իրենց գերմանասիրությամբ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին գերազանցել էին նույնիսկ Համիդին։ Երիտթուրքական լիդերները գերմանական ներկայացուցիչներին գայթակղում էին նրանով որ թուրքական բանակի վրա վերահսկողություն հաստատելով՝ Գերմանիան ազդեցություն կգործի Բարձր Դռան քաղաքականության վրա[31]։

Երիտթուրքերի գերմանամոլ դիրքերի արտահայտման մեջ էական դեր էին խաղում գերմանական քաղաքականության՝ գնալով պարզորոշ ու ցցուն դարձող հակառուսական ուղղվածությունը և Էնվերի ու նրա գերմանասեր խմբակցության ազդեցությունը։ Բնականաբար, գլխավորը վերջին հանգամանքը չէր, այլ այն, որ Գերմանիայի հակառուսական քաղաքականության մեջ երիտթուրքերը տեսնում էին իրենց պանթուրքիստական ծրագրերի իրականացման հնարավորությունը։

Գնալով ծավալվում է Գերմանիայի տնտեսական ներթափանցումը Թուրքիա։ 1911 թվականին «Դոյչե բանկը ձեռք է բերում Գ. Գյուլբենկյանի «Թուրքական նավթային ընկերության» բաժնետոմսերի 25 տոկոսը[32]։ XX դ. առաջին տասնամյակում Գերմանիան լայն մասնակցություն էր ցուցաբերում Թուրքիայի հանքարդյունաբերությանը և բամբակագործությանը, որոնք հիմնականում ընկած էին արևմտահայկական շրջաններում։ Ալեքսանդրեթը, ըստ էության, դարձել էր գերմանական նավահանգիստ։ Ըստ «Մշակ» թերթի թղթակցի հաղորդման՝ «ամբողջ Կիլիկիան (Փոքր Հայաստանը) գտնվում է գերմանական շահերի շրջանում»[33]։

Գերմանական առևտրական ընկերությունները Արևմտյան Հայաստանի շատ վայրերում՝ Էրզրումում, Վանում, Ալեքսանդրեթում, Մարաշում Ուր-

---

29 Ե. Ղ. Սարգսյան. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918, Ե., 1964, էջ 18—19։

30 Ջ. Կիրակոսյան. Նշվ. աշխ., էջ 127։

31 Die große Politik. Bd. 38, № 15439. Տե՛ս նաև И. И. Голобородко, Старая и новая Турция. П.—М., 1914, с. 158.

32 В. В. Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны. М., 1960, с. 34.

33 Մշակ 1. I., 1914։

ֆայում և այլուր պահում էին իրենց առևտրական գործակալները[34]։ Նույնիսկ Վանի վիլայեթում, որը Անատոլիայում գերմանական առևտրական կետերից հեռու ընկած շրջան էր, գերմանացիները աշխույժ գործարքներ էին կատարում։ 1911 թ. օրինակ, այստեղ գերմանացի առևտրականների բերած ապրանքների տեսականին հասնում էր 17-ի՝ 1903 թվականի երեքի փոխարեն[35]։

Քսաներորդ դարի առաջին տասնամյակում (1902—1911 թթ). Գերմանիայի առևտուրը Թուրքիայի հետ (ըստ գերմանական հրատարակված աղբյուրների և Բ. Իշխանյանի կատարած հաշվարկի) աճել էր մեծ տեմպերով։ Դեպի Թուրքիա գերմանական ապրանքների ներմուծումը ավելացել էր 92 տոկոսով, իսկ արտահանումը՝ 160 տոկոսով[36]։

«Դոյչե բանկի» ֆինանսական օգնությամբ տարեցտարի Փոքր Ասիայում աճում էր գերմանական արդյունաբերական ձեռնարկությունների թիվը։ Թուրքիայում Գերմանիայի առևտրի հաջողությունները ուղեկցվում էին Գերմանիայի կողմից նաև երկրի արդյունաբերական նվաճմամբ։ Այս շրջանում գերմանացի մասնագետները և արդյունաբերողները ձեռնամուխ են լինում նաև Արևմտյան Հայաստանի հանքային հարստությունների հետախուզմանը և շահագործմանը։ Մանավանդ մեծ էր գերմանացիների հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի ընդերքի հետախուզման ուղղությամբ։ «Համաձայն իմ ստացած տեղեկությունների,—հայտնում էր Թուրքիայում ռուսական դեսպան Գիրսը Ռուսաստանի արտգործնախարարին 1914 թ. փետրվարի 23-ին (մարտի 13-ին),—Գերմանիայի առևտրա—արդյունաբերական շրջանները սկսել են վերջին ժամանակները հետաքրքրվել Հայաստանով։ Գերմանական եռանդի համար նրա մեջ գտնում են գործունեության նոր շրջան և հենակետ ընդդեմ հյուսիսի ազդեցության»[37]։

Հայկական խնդրում հատկապես կարևոր դեր էր հատկացվում Էրզրումում նորևս (1913 թ.) բացված գերմանական հյուպատոսությանը և այնտեղ նշանակված հյուպատոս Անգերսին։ Էրզրումից ռուսական բանակի գլխավոր շտաբ այս օրերին ուղարկված մի հաղորդագրության մեջ այս առթիվ տեղեկացվում էր, որ Էրզրումի գերմանական հյուպատոսությանը հանձնարարված է աստիճանաբար ստեղծելու «գերմանական նոր շահախնդրություններ»[38]։

Շուտով հյուպատոս Անգերսի օժանդակությամբ Էրզրումում հիմնվեց «Ածխի և նավթի հետազոտման ընկերություն»։ Էրզրում և առհասարակ Թուրքիա ժամանած գերմանական ձեռնարկատերերն ու նրանց ներկայացուցիչները աշխատում էին կոնցեսիաներ ստանալ Էրզրումին մերձակա նավթային շրջանների հետախուզման, ինչպես նաև Վանի վիլայեթի անտառների, Արղունի շրջանի պղնձահանքերի նկատմամբ[39]։ Բաթման—սու գետի շրջանում բամբակի պլանտացիաներ հիմնելու նպատակով Մոսուլի գերմանական հյուպատոս Հոլշտայնը Գերմանիայից եկած մասնագետների հետ միասին ուսումնասիրում էր Դիարբեքիրի, Սերետի և Ֆարկինի ընդարձակ տարածքները[40]։ Գերմանացի արդյունաբերող Հեկմանին տրվեց Էրզրումի շրջանի պղնձահանքերի շահագործումը, իսկ Էրզինջանում ծառայող գերմանացի մի սպա իրավունք ստացավ պղինձ արդյունահանել տեղի հանքերում[41]։

---

34 Die groβe Politik, Bd. 38, S. 118.

35 Новое время, 2.IV.1914.

36 Բ. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 45։

37 Ժողովածու դիպլոմատիկական դոկումենտների. Բարենորոգումները Հայաստանում. 1912 թ. նոյեմբերի 12-ից մինչև 10 մայիսի 1914 թ. (այսուհետև՝ Բարենորոգումները Հայաստանում...)։ Թիֆլիս, 1915, էջ 13։

38 С. М. Акопян. նշվ. աշխ., էջ 54։

39 Die groβe Politik, Bd. 38, S. 118.

40 Նույն տեղում։

41 Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского временного правительства. Серия III (1914—1917), т. I—XIII. т. I, с. 336.

Անատոլիական երկաթուղային ընկերությունը ձեռք էր բերել 50 000 հեկտար ոռոգելի դաշտ։ Մանավանդ նկատելի էր ընկերության գործունեությունը Կիլիկիայում, ուր նա ստեղծել էր «Անատոլիական արդյունաբերական—առևտրական ընկերությունը»։ Այս ձեռնարկուական ընկերությունը, որի կենտրոնը գտնվում էր Ադանայում, ուներ 500 000 մարկ հիմնադրամ՝ այն ժամանակվա համար նշանակալից մի գումար։ Ադանայից իր գործունեությունն էր ծավալում «Գերմանա—լևանտական բամբակագործական ընկերությունը»՝ 700 000 մարկ հիմնական դրամագլխով[42]։ Նշված ընկերություններին էական էր հայերի մասնակցությունը՝ որպես արտադրողներ, ինչպես նաև բաժնետերեր, վկայելով Ա. Մանդելշտամի կարծիքն այն մասին, որ հայ ժողովուրդը «Թուրքիայի ասիական շրջաններում, գերմանացիների ապագա բնակության վայրում, ներկայանում էր որպես ուժեղ տնտեսական գործոն»[43]։

Շատ որոշակի էր հայերի խաղացած դերը Կիլիկիայում գործող գերմանա—լևանտական ընկերության գործունեության մեջ։ Գերմանացի ձեռնարկատերերը բամբակագործության մեծ շահութաբերությունը նկատի ունենալով՝ ֆինանսական լուրջ միջոցներ էին ներդնում հայկական այդ շրջանում բամբակի մշակման ու ստացման ասպարեզում, ձգտում Կիլիկիան դարձնել երկրորդ Եգիպտոս։ Եվ այդ ուղղությամբ ընդամենը մի քանի տարում նրանք որոշակի հաջողությունների էին հասել։ 1912—1914 թթ. այստեղ տարեկան արտադրվել էր 100 000 հակ բամբակ[44]։ Յուրաքանչյուր հակը հավասար էր 200 կգ-ի, ուրեմն տարեկան արտադրվում էր 20 միլիոն կգ բամբակ։ Ընկերությունը նախատեսում էր բամբակի տարեկան արտադրությունը հասցնել 100 միլիոն կգ-ի։

Ադանայի և Զեյթունի շրջաններից՝ Զիխանից, Ինջիրլիքից, Դյորթ—Յոլից, Այասից և Հարակից այլ տեղերից թուրքական կառավարության կազմակերպած հայերի բռնագաղթեցումն ու կոտորածը ծանր հարված են հասցնում «գերմանա—լևանտական բամբակագործական ընկերությանը», նրա հետագա գործունեությունը դարձնելով անհնարին, հանգամանք, որը, անկախ ամեն ինչից, մի անգամ ևս վկայում է հայերի կարևոր մասնակցությունը Կիլիկիայում բամբակի մշակման մեջ։

1915 թ. հուլիսին լևանտական ընկերության ղեկավարությունը և Ադանայի գերմանական հյուպատոս Բյուգեն վճռական բողոքներ են ներկայացնում, որոնցում արտացոլված էր նաև հայերի էական մասնակցությունը բամբակագործության զարգացման ասպարեզում։ 1915. հուլիսի 21-ին բամբակագործական ընկերության ղեկավարը։ Բյուգեին գրում էր. «Առանց մեր կողմից զուտ թուրքական հանձնաժողովների նկատմամբ արդյունավետ վերահսկողության, հանձնաժողովներ, որոնց հանձնվում է հայերից բռնագրավված ունեցվածքի իրացումը, ոչ մի դեպքում չի կարելի ակնկալել մեր շահերի պահպանում։ Ինչպես վկայում է հայերի նկատմամբ մեր վարկառուական պահանջների մասին կից ուղեկցվող ցուցակը, խաղաքարտի վրա այնքան մեծ գումար է դրված, որ չե կարելի հանձնվել թուրքական միջոցառումների ողորմածությանը»[45]։ Հայոց եղեռնի այդ ծանր օրերին գերմանական ընկերության ղեկավարությունը դեռ ակնկալում էր ինչ—որ բան ստանալ թուրքերից՝ իր կորսվող ակտիվների դիմաց։

Ընկերությունից վարկեր էին վերցրել զգալի թվով հայեր, նրանց թվում կային նաև հայ խոշոր հողատերեր, որոնք պարտքով մեծ գումարներ էին

---

42 Ռ. Իշխանյան. նշվ. աշխ., էջ 40—41։

43 Ա. Ն. Մանդելշտամ. նշվ. աշ-խ., էջ 63։

44 Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива МИД кайзеровской Германии. Сборник Составитель, автор предисловия и введения доктор исторических наук, проф. Вардгес Мпкаелян (այսուհետև՝ Армянский вопрос и геноцид армян в Турции). Е., 1995, с. 200.

45 Նույն տեղում։

ստացել։ Հայ պարտառուներին վարկ տալիս գերմանացիները, տվյալ դեպքում լեվանտական ընկերությունը, ցուցաբերում էր մեծ զգուշավորություն՝ գրավ վերցնելով նրանց ունեցվածքը, որը սովորաբար շատ ավելին արժեր, քան դրվող վարկի գումարն էր։ «Եվ հենց այդ ունեցվածքի օտարման եղանակը և նրա կամայական օգտագործումը հարցականի տակ են դնում մեր ակտիվները»[46], գրում էին նրանք։

Հուլիսի 24-ին հյուպատոս Բյուգեն ինքն է դիմում Կ. Պոլսում գերմանական դեսպան Վագենհայմին։ Նրա գրության մեջ նույնպես առաջ էր քաշվում նյութական այն վնասը, որ գերմանացիները կրում էին տեղի «հայերի բռնագաղթեցման հետևանքով», այդ վնասը հասցնելով թուրքական 60 000 լիրայի՝ այն ժամանակվա դրամական կուրսով պատկառելի մի գումարի*։ Գերմանական ընկերության գործերին հայերի մասնակցության էական նշանակությունը, Բյուգենի վկայությամբ, պայմանավորված էր այն բանով, որ որևէ մահմեդական երկրում, մանավանդ Թուրքիայում, եվրոպական ձեռնարկուական գործունեությունը գրեթե բացարձակապես իրականացվել կարող էր միայն «քրիստոնյա տարրի օգնությամբ և միջոցով»[47] և որ «այժմ դրակոնյան միջոցառումների իրականացման հետևանքով ոչ միայն հայերի, այլև Թուրքիայի ամբողջ քրիստոնյա տարրի վրա այնպիսի ազդեցություն է կատարվում, ավելի ճիշտ նրանք այնպիսի իրարանցման մեջ են, որ Թուրքիայի ողջ քրիստոնյա բնակչության վստահությունը կառավարության հանդեպ խախտվել է, և դրանով իսկ մի հայտնի չափով ուղղակի կործանվում է առևտրի հետագա կամ առհասարակ զարգացման հեռանկարը»[48]։ Բյուգեն հայտնում էր, որ երիտԹուրքերի, կառավարության կողմից հայերի ոչնչացումը «ոչ ավել ոչ պակաս նշանակում է գավառի կործանում»[49]։ Հայերի գործունեության կարևոր դերը տարածաշրջանում Բյուգեն ամփոփել է հետևյալ խոսքերում. «Ինչ վերաբերում է հատկապես Ադանային, ապա քաղաքի պատկերը հայերը բռնագաղթեցումից հետո լինելու է չափազանց տխուր և անբարենպաստ, և այս վայրը այլևս նման հնարավորություններ չի տրամադրելու եվրոպական, ուրեմն նաև գերմանական նպատակային շահերի իրականացման համար»[50]։

Հայերը տնտեսական տարբեր նպատակներով զանազան գործարքներ էին կատարում «Գերմանական արևելյան բանկի» Կ. Պոլսի բաժնետիրական ընկերության միջոցով։ Հայկական եղեռնը ծանր վիճակի առաջ է կանգնեցնում նաև բանկին։ Հայերից շատերը այդ բանկի պարտապաններն էին կամ նրա պարտապանների պարտապանները, այդ պատճառով էլ «այդ անօրինակ ակտի (հայերի բռնագաղթեցման և կոտորածի—Ա.Խ.) հետևանքով մեր շահերին ծանր վնաս է հասցվում»[51],—ասված էր նշված բանկի՝ Կ. Պոլսի ներկայացուցիչների դիմումում, որը 1915 թ. օգոստոսի 23-ին խնդրատուները տվել էին Կ. Պոլսում գերմանական դեսպան Հոհենլոե—Լանգենբուրգին։

Հայ բնակչության և Արևմտյան Հայաստանի հանդեպ Գերմանիայի վերաբերմունքը դեռ XIX դ. վերջերից կապվում էր գերմանա—թուրքական հարաբերությունների հետ։ Կայզերական Գերմանիան և Թուրքիան և՛ Աբդուլ Համիդի, և՛ երիտԹուրքերի կառավարման ժամանակ ձգտում էին վերացնել «հայկական այն սեպը», որը խրված էր Թուրքիայի և մահմեդական աշխարհի միջև։ Այս հարցում գերմանա—թուրքական դիրքորոշումները հիմնականում համընկնում էին։ Գերմանիային և Թուրքիային հարկավոր էր ունենալ Հայաստան առանց հայերի, մինչդեռ Ռուսաստանը անհրաժեշտորեն պիտի

46 Նույն տեղում, էջ 201։

* Դա այն ժամանակ հավասար էր 500 000 ոսկե ռուբլու (1 լիրան 9 ռուբլու հաշվով)։

47 Նույն տեղում, էջ 203։

48 Նույն տեղում, էջ 203—204։

49 Նույն տեղում, էջ 204։

50 Նույն տեղում, էջ 205։

51 Նույն տեղում, էջ 220—221։

պաշտպաներ «հայկական սեպը», որը Թուրքիային բաժանում է Թուրք—Թաթարական արևելքից։ Այս հողի վրա Արևմտյան Հայաստանը կարևոր նշանակություն էր ստանում Թուրք—գերմանական հակառուսական ծրագրերում, և Թուրքերը Հայաստանն ու հայերին համարում էին խոչընդոտ, որը խանգարում է Միջերկրականից մինչև Ալթայ պանթուրքական պետության ստեղծմանը։ Այդ պատճառով երիտթուրքերը իրենց արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը 1910—1915 թվականներից սկսած աստիճանաբար տեղափոխում են Արևելյան Անատոլիա (Արևմտյան Հայաստան)[52]։

Գերմանական կառավարությունը Թուրքիայում հայ ժողովրդին և Արևմտյան Հայաստանին վերաբերվում էր զուտ շահադիտական, կայզերական դիրքերից։ Բայց դրանք հակադրվում էին հայերի ազգային ձգտումներին, քանի որ իր ծրագիրը իրականացնելիս Գերմանիան վարում էր բացահայտ թրքամետ քաղաքականություն և շատ դեպքերում ոտնահարում հայ բնակչության՝ իր գոյատևմանն ուղղված օրինական պահանջները։ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած մի քանի տարիներին պարզ երևում է Գերմանիայի քաղաքականության հակահայկական դեմքը, մանավանդ երբ նա բացեիբաց պաշտպանում էր Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թիվը կրճատելու թուրքական ծրագիրը[53]։

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Գերմանիան արդեն հավանություն էր տվել Հայաստանից հայերին հեռացնելու թուրքական ծրագրերին։ Արևմտյան Հայաստանից հայերին հեռացնելու գաղափարը Գերմանիան պաշտպանում էր երկու նկատառումով։ Նախ, դրանով Թուրքիան Ռուսաստանի սահմանամերձ շրջանները աղատում էր ռուսասեր հայ բնակչությունից և նրանց տեղը բնակեցնում մահմեդականների և, երկրորդ, հայերի տեղափոխումը դեպի Միջագետքի տափաստաններ հնարավորություն էր ընձեռում Բաղդադի երկաթուղուն մերձակա շրջաններում ունենալ էժան ու որակյալ բանվորական ուժ, որի կարիքն ունեին վերջին տարիներին այնտեղ հաստատված գերմանական պլանտատորներն ու մյուս ձեռներեցները[54]։

Ռոհրբախը գտնում էր, որ եթե Թուրքիան կարողանա իր մահմեդական բնակչությունը դեպի հյուսիս տեղափոխել և շփման մեջ մտնել Կովկասի 7—8 միլիոն մահմեդականների հետ, ապա կձևավորվի ցեղի ու կրոնի միասնությամբ կապված 14—15 միլիոն մահմեդականների մի այնպիսի օջախ, որը կդառնա սարսափելի դիմադրության ուժ։ «Քանի որ Հայաստանը դիմադրում է այդ պլանի իրագործմանը,—ասում էր Ռոհրբախը,—ապա հարկավոր է վերափոխել այդ շրջանի բնակչությունը՝ այնտեղից դուրս տանելով նրա արմատական բնակիչ—հայերին։ Միջագետքը, որով անցնելու է Բաղդադի երկաթուղին, նոսր է բնակեցված։ Այդ հանգամանքը վնասաբեր է անդրադառնում երկաթուղու տնտեսական զարգացման վրա, և այդ պատճառով միանգամայն հասկանալի է, որ Գերմանիան ձգտում է օգնել աղետին։ Դրա համար բավական կլիներ այստեղ բնակեցնել հայերին Հայաստանից, իսկ մերջիններիս փոխարեն Օսմանյան կայսրությանը թույլ տալ մահմեդականներ բերել Թուրքիայից և Ռուսաստանից։ Եթե այդպես կատարվի՝ Հայաստանը մի հարվածով դուրս կմղվի Ռուսաստանի ձեռքից»[55]։

Թուրքիայի նման Գերմանիան ևս չէր հանդուրժում հայերի դրական մերաբերմունքը Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ, գտնելով, որ Արևմտյան Ասիայի համար չի կարող լինել ավելի սպառնալից և վտանգավոր վիճակ, քան Հայաստանը, Պարսկաստանը և Անդրկովկասը Ռուսաստանի

52 Նույն տեղում, էջ 17։

53 П. Рорбах, Война и германская политика, с. 101.

54 A. Springer, Babylonien, das reichste Land der Vorzeit und das lohnendeste Kolonisationsfeld fur die Gegenwart. Heidelberg, 1886, S. 265.

55 Кавказское слово, 1916, № 84.

ձեռքում կենտրոնացնելը[56]։ Ռոհրբախը գերմանական կառավարության համար կարևոր էր համարում Ռուսաստանին զրկել այդ հնարավորությունից, գտնելով, որ վերջինիս կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը մահացու հարված կլինի Թուրքիայի և Գերմանիայի համար[57]։

Հայկական շրջաններում Ռուսաստանի հանգեպ հայերի աճող համակրանքի դեմն առնելու համար Գերմանիան Թուրքիայում գործադրում էր բոլոր միջոցները։ Գերմանացի պրոֆեսոր Կարլ Ռոթը գտնում էր, որ Գերմանիայի համար «Հայաստանի մեջ ռազմական գործողություններն ամենամեծ կարևորությունն ունեն։ Հոն պետք է, որ Ռոսիան տեղի տա։ Մենք մեզ համար է, որ կաշխատենք բոլոր ջանքերով»[58]։ Ռոհրբախի կարծիքով Թուրքիայում Գերմանիան պետք է՝ 1) բացառապես Թուրք—օսմաններով բնակեցված «պողպատյա պատնեշ» ստեղծի ընդդեմ Ռուսաստանի, 2) լուծի «հայկական տանջանքների մասին այրող հարցը» և 3) արժեքավոր և աշխատասեր հայերով բնակեցնի Միջագետքը, որով կնպաստի Թուրքիայում «իր քաղաքական և տնտեսական խնդիրների իրականացմանը»[59]։ Հիշենք, որ այս խոսքերի և մտքերի հեղինակ Ռոհրբախը արտահայտում էր Գերմանիայի արագործնախարարության կարծիքը, որտեղ նա գլխավորում էր արևելյան բաժինը։

1914 թվականի փետրվարին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆոն Յագովի գաղտնի միջնորդությամբ ստեղծվեց գերմանա—թուրքական կոմիտե՝ Ֆոն դեր Գոլցի նախագահությամբ։ Կոմիտեի՝ Բեռլինում կայացած հիմնադիր նիստում, որին մասնակցում էր Գերմանիայում թուրքական դեսպանության ամբողջ անձնակազմը, Ֆոն դեր Գոլցը հայտնում է գերմանական կառավարության կարծիքը Վանի, Բաղեշի և Կարինի վիլայեթներից հայերին տեղափոխելու մասին։ Այդ կարծիքը նա «հիմնավորում է» Թուրքիան Ռուսաստանի կողմից անդամահատելու քաղաքականությունը խափանելու անհրաժեշտությամբ։ Իր ճառում Ֆոն դեր Գոլցն ասում է. «Հարկ է, որ Թուրքիան նոր աղետ մը փրկելու համար միանգամ ընդմիշտ ռուս—թուրքական սահմաններու կից Վանի, Բաղեշի և Կարնո կուսակալությանց մեջ ապրող կես միլիոն հայությունը հեռացվի ռուս—թուրքական սահմաններեն և փոխադրվի հարավ, Հալեպի և Միջագետքի կողմերը։ Իսկ այս կողմերեն ալ արաբները փոխադրվին ռուս—թուրքական սահմանները»։[60]

Խորհրդակցությունը տեղի էր ունենում 1914 թ. փետրվարին, երբ Կոստանդնուպոլսում ստորագրվում էր ռուս-թուրքական համաձայնագիրը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման մասին։ Պարզ է, որ գերմանական կառավարությունը, հենց այդ օրերին գերմանա-թուրքական կոմիտե ստեղծելով և նրան նախագահ դնելով Ֆոն դեր Գոլցին, այդ նիստին հրավիրված թուրքական դեսպանի միջոցով դիմում էր բացահայտ սադրանքների՝ Ֆոն դեր Գոլցի բերանով թուրքական կառավարությանը մի ավելորդ անգամ ևս հուշելով Գերմանիայի իրական ցանկությունը՝ համաձայնագրի ստորագրումը և առհասարակ բարենորոգումների ծրագիրը տապալելու մասին։ Բայց հայ բնակչության տեղահանման գործում գերմանական կառավարությունը և Թուրքիայում նրա դիվանագիտությունը առայժմ չէին համարձակվում, թուրքերի հետ գործակցած, գործնական քայլեր կատարել։ Այդ զգուշությունը, առաջին հերթին կապված էր այն բաի հաշվառման հետ, որ խաղաղ պայմաններում հայերին տեղահանելը անմիջապես կհանդիպեր արևմտահայ ժողովրդի բողոքին ու զինված դիմադրությանը, որը ոչ պատերազմական պայմաններում կարող էր իրական հաջողության հասնել և, երկրորդ, այդ քայլը անխուսափելիորեն առաջ կբերեր Անտանտի երկրների և հատկապես

56 П. Рорбах, նշվ. աշխ., էջ 101։

57 Նույն տեղում, էջ 61—62։

58 Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 166։

59 Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 141։

60 Գ. Պալաճյան, Հայ Գողգոթան, Ե., 1991, էջ 39։

Ռուսաստանի բողոքն ու զինված միջամտությունը Թուրքական գործերին, որից Գերմանիան ամեն կերպ խուսափում էր։

Հայկական մամուլից, հայ գործիչների հետ ունեցած շփումներից, ինչպես նաև Թուրքիայում գտնվող գերմանական առևտրաարդյունաբերական շրջանների ներկայացուցիչների և դիվանագիտական անձանց վարքագծից հայ ժողովրդի լայն խավերը ծանոթ էին Թուրքիայում գերմանացիների քաղաքականության թուրքասեր և ըստ էության հակահայկական ուղղվածությանը, և դրանից էլ ձևավորվել էր հայերի բացասական վերաբերմունքը կայզերական Գերմանիայի նկատմամբ։ Դրան շատ լավ տեղյակ էին հատկապես Թուրքիայում հավատարմագրված գերմանական դիվանագետները, որոնք մշտապես լինում էին հայկական միջավայրում։ Ադանայի հյուպատոս Բյուգեն, օրինակ, 1913 թ. հունիսի 8-ին Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմին հայտնում էր, որ դեռ շատ վաղաժամ է Սսի հայոց կաթողիկոսին գերմանական ռազմանավերի հրամանատարների քաղաքավարական վերջին այցելություններից այն հետևությունն անել, թե գերմանացիները դրանով իսկույն ևեթ հայերին գրավել են իրենց, և, հետևաբար, Փոքր Ասիայում իրենց վարած քաղաքականության կողմը։ «Հայերը,—գրում էր նա,—քաղաքականապես բավականին գործնական են, որպեսզի գերմանական ռազմանավերի ժամանումը չընկալեն հօգուտ իրենց շահերի»։ Բյուգեն, որը 1910 թվականից նստած էր Ադանայում և գիտեր կիլիկահայերին, հայտնում էր, որ մինչև այժմ հայերը միշտ և բացարձակապես եղել են Թուրքիայում գերմանական քաղաքականության հակառակորդներ, բայց ոչ գերմանական ազգի և կառավարության»[61]։

Գերմանիան իր քաղաքական ծրագրերը Թուրքիայում իրականացնում էր՝ հենվելով այնտեղ գտնվող իր դիվանագիտական և զինվորական մարմինների, կիսապաշտոնական, հասարակական—մշակութային, եկեղեցական կազմակերպությունների, տնտեսական բնույթի հիմնարկ—ձեռնարկությունների վրա։ Սրանց գործունեությունը զգալի չափով տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանում, արևմտահայ իրականության մեջ և նպատակ ուներ ամեն կերպ աջակցել Թուրքիայում կայզերական Գերմանիայի կառավարության նախագծումներին ռազմական, տնտեսական, մշակութային և քաղաքական բնագավառներում։

Թուրքիայում գտնվող գերմանական դիվանագետների ղեկավար կենտրոնը Կ. Պոլսում հաստատված գերմանական դեսպանությունն էր, որին ենթակա հյուպատոսություններ կային Ադանայում, Հալեպում, Ալեքսանդրեթում, Բաղդադում, Բեյրութում, Դամասկոսում, Էրզրումում, Սամսունում, Զմյուռնիայում, Տրապիզոնում, Մոսուլում, Հայֆայում[62]։ Այսպիսով, հյուպատոսությունների նկատելի մասը գործում էր բուն Արևմտյան Հայաստանում և հայաշատ այլ վայրերում։ Նայած ժամանակին և հանգամանքներին՝ նրանց գործունեության մի մասը զբաղեցնում էր արևմտահայերի մեջ տարվող աշխատանքը և հատկապես հակառուսական պրոպագանդը։ Հայերին Գերմանիայի կողմը տրամադրելու նպատակով հյուպատոսները շարունակ այցելում էին հայկական գավառներ, լինում էին Վանում, Բիթլիսում, Մուշում, Խարբերդում, Դեարբեքիրում և այլ տեղերում, ձգտելով դժգոհություն առաջացնել Ռուսաստանի և ռուսների հանդեպ և հայերին գրավել Գերմանիայի կողմը։ Այս տեսակետից գերմանական կառավարությունը լուրջ հույսեր էր կապում Արևմտահայաստանի կենտրոնում՝ Էրզրումում, 1913 թ. բացված հյուպատոսության և հյուպատոս Էդգար Անդերսի հետ[63]։

---

61 Армянский вопрос и геноцид армян, с. 56.

62 Deutschland und Armenien (1914—1918). Sammlung diplomatischer Aktensfücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes. Lepsius, Potsdam. 1919, S. 503—507.

63 Сборник дипломатических документов. Реформы в Армении. (այսուհետև՝ Реформы в Армении...), П-д, 1915, с. 122—123.

Թուրքական բանակի վերակազմավորման, նրա հրամանատարական պաշտոնները իր ձեռքում կենտրոնացնելու համար Գերմանական կառավարությունը Թուրքիա էր ուղարկում ռազմական միսիաներ, որոնք միաժամանակ գլխավորում էին Թուրքիայի քրիստոնյա բնակչության և առաջին հերթին հայերի վրա Գերմանիայի ազդեցության ուժեղացման և Ռուսաստանի հանդեպ նրանց դրական վերաբերմունքի դեմ պայքարելու գործը։ 1885 թվականից սկսած Թուրքիայում հաստատված գերմանական ռազմական միսիան գլխավորում էր Ֆոն դեր Գոլցը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1913 թ. Կ. Պոլիս եկավ գերմանական նոր ռազմական միսիա՝ գեներալ Լիման Ֆոն Սանդերսի գլխավորությամբ, որը փաստորեն դարձավ Թուրքական բանակի ղեկավարը։ Գերմանական ռազմական միսիան Թուրքիա ուղարկվեց երիտթուրքական կառավարության 1913 թ. մայիսի 22-ի պաշտոնական հրավերով[64]։ Միսիայի միջոցով Գերմանիան պետք է ավելի ուժեղացներ իր ազդեցությունը Թուրքիայի վրա։ Բացի Թուրքական բանակը գերմանական ձևով վերակազմավորումը ավարտելուց, միսիան պետք է Թուրքական տարածքը, մանավանդ Արևմտյան Հայաստանը, հացներ նախապատրաստական վիճակի՝ Ռուսաստանի դեմ պատերազմի բռնկման դեպքում[65]։

Կայզերական Գերմանիայի կառավարությանը Թուրքիայում հենարան էին ծառայում տարիներ շարունակ այնտեղ իրենց գործունեությունը իրականացնող գերմանական միություններ ու կազմակերպությունները, միսիոներական հաստատությունները, ֆիրմաների ներկայացուցիչները։ Սրանց թվում էին Գերմանական արևելյան միսիան, Գերմանա—ասիական ընկերությունը, Գերմանա—Թուրքական կոմիտեն և այլ կազմակերպություններ, որոնցից շատերի գործունեությունը ընդգրկում էր բուն Արևմտյան Հայաստանը, հայ ազգաբնակչությունը։

Վերևում թվարկված կազմակերպություններից ամենահինը Գերմանական արևելյան միսիան էր, որը հետագայում իր անվանն առընթեր կրում էր նաև Հայկական օգնության մարմին անվանումը (Deutsch Orient Mission—Armenisches Hilfwerk)։ 1895 թ. կրոնական գործիչ Լեփսիուսը Գերմանական արևելյան միսիան հիմնադրել է Արևելքի մահմեդականների շրջանում ավետարանական աշխատանք տանելու նպատակով։ Տվյալ դեպքում Արևելքը ընդգրկում էր հիմնականում Օսմանյան կայսրության տարածքը, այդ թվում նաև՝ Արևելյան Անատոլիան (Արևմտահայաստանը)։ 1890-ական թթ. կեսերին Թուրքիայում Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածները Լեփսիուսին մղում են ստեղծելու Հայկական օգնության հաստատությունը՝ գթության քույրերի աշխատավայրերով Թուրքիայում՝ Ալեքսանդրեթի սանջակում, Սիրիայում (հայկական շրջաններին շատ ծանոթ գթության քույր Կարին Եպեի ղեկավարությամբ), Պաղեստինում, ինչպես նաև Պարսկաստանում, Բուլղարիայում և Ռուսաստանում։ Հայերին օգնող այդ հաստատությունը ստեղծել և պահում էր որբանոցներ, հիվանդանոցներ, վարժարաններ, գործագործական մանուֆակտուրա (նախ՝ Ուրֆայում, ապա՝ Հալեպում)[66]։

Անշուշտ, միսիայի քարոզիչները ավետարանի հետ միասին տարածում էին նաև գերմանասեր գաղափարներ։ Նշենք, սակայն, այն կարևոր հանգամանքը, որ Լեփսիուսն ինքը չէր թաքցնում իր բացասական վերաբերմունքը Աբդուլ Համիդի և երիտասարդ Թուրքերի հանդեպ և տքնաջան աշխատանք էր տանում հայերին օգնելու ուղղությամբ։ Սկզբնական շրջանում կայզերական Գերմանիայի կառավարությունը չէր համակրում նրա կազմակերպությանը։ Բայց որքան Արևելյան միսիայի ղեկավար մարմնի մեջ ավելանում էր գեր-

---

64 Die große Politik. 38 Band, S. 170—171.

65 Նույն տեղում, փաստաթուղթ 15439։

66 Die Religion in Geschichte und Gegenwart. Vierter Band. Tübingen, 1960, S. 324.

մանական կառավարության քաղաքականությանը ծառայելու պատրաստ մարդկանց թիվը, այնքան կառավարության վերաբերմունքը փոխվում էր[67]։

Բնականաբար, Թուրքիայում գործող Գերմանական արևելյան միսիան պետք է նպաստեր Թուրքիայում իր կառավարության վարած քաղաքականության իրականացմանը և գործակցեր նրա ներկայացուցիչների հետ։ Հետագայում, հայոց եղեռնի վերաբերմամբ ընկերության ղեկավար մարմնի բռնած ոչ մարդասիրական դիրքի եղեռնը լռության մատնելու կապակցությամբ, որ կատարվում էր գերմանական կառավարության թելադրանքով, Լեփսիուսը վճռականորեն սահմանափակվում է նրանից, հանգես է գալիս նրա դեմ և 1916 թ. հեռանում Հոլանդիա։ 1921 թ. Լեփսիուսը Պոտսդամում վերակենդանություն է տալիս ընկերությանը՝ այս անգամ «Լեփսիուսի Գերմանա—արևելյան միսիա—հայերի օգնության մարմին» անվանումով[68]։

Արդեն նշել ենք, որ գերմանական արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ 1913 թ. ստեղծվում է Գերմանա-Թուրքական կոմիտե։ Կառավարությանն առընթեր այս մարմինը Թուրքիայում նստած մարշալ Ֆոն դեր Գոլցե գլխավորությամբ նպատակ ուներ օժանդակել Թուրքիայում Գերմանիայի տնտեսական, քաղաքական և ռազմական ազդեցության տարածմանը և օգնել երիտթուրքերին՝ երկրի կառավարման գործում։ 1913 թ. Գերմանիայի արտաքին գործերի նախարար (պետական քարտուղար) Ֆոն Յագոմի և նրա օգնական Ցիմերմանի հավանությամբ Բեռլինում ստեղծվում է նաև Գերմանա—հայկակա կոմիտե, որի հիմնական խնդիրներից մեկը հայերին ռուսական ազդեցությունից հեռու պահելն էր։ Ըստ Պալաքյանի, այդ կոմիտեի նպատակը ոչ այնքան արևմտահայերի պաշտպանությունն էր, որ հուշակել էին նրա հիմնադիրները, այլ «միայն արգելք ըլլալու, որ Թուրքիո մեջ ապրող 2 միլիոն հայությունը գործիք չըլլա ցարին կառավարության ձեռքը... առ վերջույն առիթ չթողնելու համար, որ հայերը պատրվակ բռնելով՝ միջամտություն գործ գնեն Թուրքիո ներքին գործերուն մեջ»[69]։

1915 թվականի աշնանը, Թուրքիայում եղեռնի դժնդակ օրերին, գերմանական կառավարությունը հիմնում է «Գերմանա—Թուրքական բարեգործության ակումբ» և «Գերմանա—Թուրքական գաղինք» կազմակերպություններ։ Երեու կազմակերպություններն էլ ղեկավար կենտրոններ ունեին Կ. Պոլսում և Բեռլինում։ Նոանց ղեկավար էր նշանակվել հայ ժողովրդի դահիճ Էնվերը[70]։

Այսպիսով, XX դ. առաջին մեկ ու կես տասնամյակում (1900—1914 թթ.) Գերմանիան Թուրքիայում իր ձեռքում է կենտրոնացնում եռեռի ռազմաքաղաքական և տնտեսական կարևոր բարձունքները։ Նրա կողմից Բաղդադի երկաթուղու անցկացումը էապես նպաստում է Թուրքիայում գերմանական քաղաքական ու տնտեսական ծրագրերի իրականացմանը։ Նշված տարիներին Արևմտյան Հայաստանն ու արևմտահայերն առհասարակ գտնվում էին գերմանա—Թուրքական հարաբերությունների ուշադրության կենտրոնում, և նրանց նկատմամբ Գերմանիայի քաղաքական մոտեցումները կոչված էին նպաստելու սուլթանական, ապա նաև երիտթուրքական կառավարությունների ուժերի ամրապնդմանը՝ որպես Ռուսաստանի դեմ ուղղված կանոնավոր գործոնի։ Արևմտահայությունը, չնայած Թուրքիայում գերմանացիներին տնտեսական միջոցառումներին իր ցուցաբերած ուժգին մասնակցությանը, տարեցտարի դառնում էր Գերմանիայի Թուրքիայի հետ քաղաքականության գոհը։

---

67 Բարենորոգումները Հայաստանում, էջ 21։

68 Վարդգես Միքայելյան. Հովհաննես Լեփսիուս. Թանկ ու անմահ անուն (Երկիր, 22. IV. 1998)։

69 Գ. Պալաքյան. նշվ. աշխ., էջ 38։

70 Армянский вопрос и геноцид армян, с. 24.

ЭКОНОМИЧЕСКОЕ И ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ ПРОНИКНОВЕНИЕ ГЕРМАНИИ В ТУРЦИЮ И ЗАПАДНАЯ АРМЕНИЯ (1900—1914)

А. Г. ХАЧАТРЯН

Резюме

В 1900—1914 гг. в руках кайзеровской Германии были сосредоточены почти все экономические и военно-политические рычаги Турции. Этому во многом способствовало строительство Германией Багдадской железной дороги. В указанный период Западная Армения и западные армяне вообще находились в центре внимания германо-турецкого сотрудничества, и политическое отношение Германии к Западной Армении наряду с экономической заинтересованностью также имело целью способствовать укреплению позиций в качестве военного фактора, направленного против России. Западное армянство, невзирая на то, что принимало деятельное участие в экономических начинаниях Германии в Турции, становилось жертвой туркофильской политики Германии.